# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Սուրեն Հակոբյան Գուրգենի ԱՁ-ն ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/29 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 56 | Ներարկիչ պոմպ-դոզատոր | - | "Ներարկիչ պոմպ-դոզատոր՝ նախատեսված բժշկական նպատակներով հեղուկների ճշգրիտ դոզավորման համար: Հոսքի արագություն (Flow Rate)՝ առնվազն 0.1-ից 1500 մլ/ժամ: Ներարկիչի ծավալ (Syringe Size)՝ առնվազն 5, 10, 20, 30, 50/60 մլ: Հոսքի ճշգրտություն՝ ոչ ավել քան ±2%: Աշխատանքային ռեժիմներ՝ առնվազն ներարկում (Infusion), ավտոմատ կանգ (Auto Stop), ձայնային և տեսողական ազդանշաններ: Սնուցման լարում՝ 220 Վ, 50/60 Հց: Էներգիայի սպառում՝ ոչ ավել քան 25 Վտ: Լիթիումային մարտկոցի առկայություն (Lithium Battery), առնվազն 2000 մԱժ (mAh): Աշխատանքային ժամանակ (Battery Life)՝ առնվազն 4 ժամ (կախված հոսքի արագությունից և ծանրաբեռնվածությունից): Լիցքավորումը՝ սարքը էլեկտրական ցանցին միացնելու դեպքում: Մարտկոցի անվտանգության համակարգ՝ գերլիցքավորման և գերբեռնվածության պաշտպանություն: Ավտոմատ անցում ցանցային սնուցումից մարտկոցի: Էկրան և կառավարում՝ ցուցադրման ձևաչափ՝ LED/LCD: Ցուցադրվող տվյալներ՝ առնվազն հոսքի արագություն (Flow Rate) |

| | | | |
|---|---|---|---|
| | | | 0.1-ից 1500 մլ/ժամ, Մնացորդային ծավալը ներարկիչում, ընդհանուր ներարկված ծավալը, Ժամանակի մնացորդ մինչև ներարկման ավարտը: Հնարավոր սխալների և խափանումների հաղորդագրություններ: Էկրանի չափսեր՝ առնվազն 3 դյույմ: Տառերի/սիմվոլների տեսանելիություն՝ մեծ և հստակ, հարմար բժիշկների համար: Կառավարման ինտերֆեյս՝ ներկառուցված հպման կամ կոճակների միջոցով կառավարում: Հստակ և հարմարավետ մենյու համակարգ: Լուսավորության կարգավորում՝ ավտոմատ կամ ձեռքով: Լավ տեսանելիություն ցանկացած լուսավորության պայմաններում: Էկրանի ցուցադրման ռեժիմներ՝ առնվազն նորմալ աշխատանքային ռեժիմ, ալարմի ռեժիմ՝ սխալի/խոչընդոտի դեպքում, սպասարկման ռեժիմ (մենյու կարգավորումների համար), ցուցադրվող տվյալներ՝ առնվազն հոսքի արագություն, ներարկման ժամանակ, դոզա, շպրիցի ծավալ: Անվտանգության համակարգ՝ օդի հայտնաբերման և խոչընդոտի սենսորներ, ցածր մարտկոցի, սխալի և այլ ռիսկերի ազդանշաններ, աշխատանքի ավտոմատ դադարեցում վտանգի դեպքում: Քաշ՝ ոչ ավել քան 3,5 կգ: Օգտագործման միջավայր՝ օդի ջերմաստիճան՝ առնվազն +5°C-ից +40°C, օդի խոնավություն՝ մինչև 90%, առանց կոնդենսացիայի: Լրացուցիչ հատկություններ՝ կարգավորվող հոսքի արագություն, ձայնային ազդանշաններ ավարտի, սխալի դեպքում: Հարմարավետ ինտերֆեյս և կարգավորիչ կոճակների առկայություն: Հավաստագրեր և համապատասխանություն՝ համապատասխանություն միջազգային ստանդարտներին (CE, ISO): Ապրանքը պետք է լինի նոր և չօգտագործված, փակ գործարանային տուփով, չվերաթողարկված: Երաշխիքային ժամկետ՝ առնվազն 12 ամիս:" |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Սուրեն Հակոբյան Գուրգենի ԱՁ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/29 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | наименование производителя | технические характеристики |
| 56 | | | |